

- 2023 թ. հունվար և փետրվար ամիսներին տնտեսական աճի ընդհանուր տեմպը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ հասել է 10.9 տոկոսի:
- Փետրվարին պահպանվել է գնաճի 8.1 տոկոս տեմպը:
- Արտահանումը պահպանել է աճի բացառիկ բարձր տեմպ և առաջ է անցել ներմուծման տեմպից:
- ՀՀ դրամն ամրապնդվել է ռուբլու, ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ:
- 2023 թ. հունվարին բյուջեի պակասուրդն անվանական արտահայտությամբ ամենաբարձր ավելցուկն է գրանցել 2021 և 2022 թ. նույն ամսվա համեմատ:
- Բանկային ոլորտի շահութաբերությանը նվազել է, սակայն ֆինանսական հատվածի ցուցանիշները մնացել են կայուն:

2023 թ. հունվարին և փետրվարին տնտեսական ակտիվությունը (ՆՏՏՀ) իրական արտահայտությամբ աճել է համապատասխանաբար 10.5 և 11.3 տոկոսով՝ 2022 թ. 12.6 տոկոս աճից հետո: 2023 թ. առաջին երկու ամիսներին աճը շարունակում են պայմանավորել հիմնականում ոչ առևտրային ծառայությունները (որոնք աճել են 23.5 տոկոսով), որին հաջորդում է առևտուրն ու շինարարությունը (համապատասխանաբար 18 և 13 տոկոսով ավելացում ՆՏՏՀ) (Գծապատկեր 1): Նույն ժամանակահատվածում արդյունաբերության ճյուղի ակտիվությունը 1 տոկոսից չի բարձրացել (ՆՏՏՀ): Հունվարի մանրամասն տվյալները վկայում են, որ արդյունաբերության ճյուղի անկումը պայմանավորված է եղել հանքարդյունաբերության և «էլեկտրականության և էներգիայի արտադրության» ծավալների կրճատմամբ (համապատասխանաբար 3.4 և 7.2 տոկոսով նվազում ՆՏՏՀ): Մյուս կողմից, արդյունաբերության ճյուղն ավելացել է 7.3 տոկոսով, ինչը հիմնականում պայմանավորված է ծխախոտի արտադրության 64 տոկոս աճով: Տեքստիլի արտադրությունը ևս աճել է 70 տոկոսով (ՆՏՏՀ), սակայն ցածր բազայից՝ այսպիսով միայն աննշան նպաստելով արտադրության ոլորտի ընդհանուր աճին: Մետաղների վերամշակման ոլորտը ևս ՆՏՏՀ աճել է 4 տոկոսով, իսկ հանքահումքային ոլորտը կրճատվել է: Պահանջարկի մասով տնտեսական ակտիվությանը նպաստել է սպառողական ծախսերի ավելացմամբ, ինչին օժանդակել է մասնավոր հատվածում իրական աշխատավարձերի երկնիշ աճը և հունվարին Ռուսաստանից դրամական փոխանցումների յոթնապատիկ աճը (ՆՏՏՀ), թեև փոխանցումների այս մակարդակն ամենացածրն է եղել 2022 թ. հունիսից ի վեր (Գծապատկեր 2):

Թեև հունվարին անշարժ գույքի շուկայում գործարքները դանդաղել են, սակայն գների բարձրացումը շարունակվել է: Երևանում վաճառված ու վարձակալված բնակարանների թիվը նվազել է 17 և 6 տոկոսով (ՆՏՏՀ): Այդուամենայնիվ, հունվարին Երևանի կենտրոնում բնակարանների գները 15 տոկոսով բարձր են եղել (ՆՏՏՀ):

Փետրվարին գնաճը պահպանել է 8.1 տոկոս հաստատուն ցուցանիշ՝ արտացոլելով սննդամթերքի գների աճի տեմպի աննշան բարձրացումը: Մա չեզոքացվել է տրանսպորտի գների աճի թուլացմամբ՝ հունվարի 4.4 տոկոսից մինչև 2.2 տոկոսի՝ փետրվարին: 8.4 տոկոս բնականոն գնաճը շարունակել է առաջ անցնել սպառողական գնաճից, ինչը վկայում է ներմուծման գների աճի մասին: 2023 թ. մարտի 14-ի նիստին ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդը որոշում կայացրեց վերաֆինանսավորման տոկոսադրույքը թողնել անփոփոխ՝ 10.75 տոկոս (Գծապատկեր 3):

2023 թ. հունվարին արտահանման ծավալների աճը պահպանել է բացառիկ բարձր մակարդակ և առաջ է անցել ներմուծման ծավալների աճից (համապատասխանաբար 130 և 73 տոկոս): Դրա արդյունքում հունվարին առևտրաշրջանառության հաշվեկշիռը 10 տոկոսով բարելավվել է: Ապրանքների արտահանման և ներմուծման 2022 թ. գրանցված միտումները պահպանվել են նաև 2023 թ. հունվարին: Ավտոմեքենաների և տրանսպորտային միջոցների արտահանման ծավալները կտրուկ ավելացել են՝ ապահովելով արտահանումների ընդհանուր աճի 60 տոկոսը: Մեքենասարքավորումների արտահանումն (մինչև 10-ապատիկ) արտահանման աճին նպաստող երկրորդ գործոնն է: Այս ապրանքները նաև ներմուծման աճը պայմանավորող հիմնական գործոններն են՝ հունվարին ապահովելով 73 տոկոս աճի մեկ քառորդը: Արտահանման մասով՝ գյուղատնտեսական արտադրանքը (բանջարեղենային ծագման) և հանքարդյունաբերությունը կրճատվել են համապատասխանաբար 34 և 16 տոկոսով (ՆՏՏՀ): Հանքահումքային արտադրանքից՝ պղնձի արտահանման արժեքը 12 տոկոսով նվազել է՝ չնայած ծավալների 3 տոկոս ավելացման, ինչը պայմանավորված է միջազգային ցածր գներով: Ռուսաստան արտահանվող ծավալները հնգապատիկ ավելացել են՝ 2022 թ. հունվարի 27 տոկոսից հասնելով 41 տոկոսի 2023 թ. հունվարին: Ներմուծման աճը հիմնականում պայմանավորված է եղել ԱՄՆ-ից, ԱՄԻ-ից, Վրաստանից և Գերմանիայից կատարվող ներմուծումներով:

2023 թ. փետրվարի կեսերից դրամը (ՀՀԴ) արժևորվել է գրեթե բոլոր արժույթների նկատմամբ: Փետրվարի կեսերից մինչև մարտի 27-ը դրամն ամենից շատ արժևորվեց ռուսական ռուբլու նկատմամբ՝ 5 տոկոսով, և եվրոյի ու ԱՄՆ դոլարի նկատմամբ՝ համապատասխանաբար 0.8 և 1.6 տոկոսով (Գծապատկեր 4): Միջազգային պահուստները 2023 թ. փետրվարին նվազել են 154 միլիոն ԱՄՆ դոլարով, սակայն նախորդ տարվա նույն ամսվա համեմատ պահպանել են 18 տոկոսով բարձր մակարդակ՝ 3.5 միլիարդ (Գծապատկեր 5): Ներմուծման ծածկույթը նվազել է մինչև 3.7 ամիս՝ կրկին արտացոլելով ներմուծման զամբյուղի աճը:


2023 թ. հունվարին գրանցվել է բյուջեի զգալի հավելուրդ՝ պայմանավորված պետական եկամուտների 15 տոկոս

ավելացմամբ: 2023 թ. հունվարին հավելուրդը հասավ 78 միլիարդ դրամի՝ նախորդ տարվա հունվարի 61 միլիարդ դրամի համեմատ: Ամենամեծ ավելացումները գրանցվել են ԱԱՀ-ի, եկամտային հարկի և շրջանառության հարկի մասով՝ անվանական արտահայտությամբ համապատասխանաբար 20, 8 և 35 տոկոսով ավելացում (ՆՏԸՀ): Ընթացիկ ծախսերն ավելացել են 11 տոկոսով (ՆՏԸՀ), ինչը պայմանավորված է սոցիալական հատկացումների և տեղական կառավարման մարմիններին փոխանցվող գումարների ավելացմամբ: 2023 թ. հունվարին կապիտալ ծախսերը կազմել են 2022 թ. հունվարի ծախսերի կեսից քիչ:

Բանկային ոլորտի կատարողականը թուլացել է, սակայն ֆինանսական ցուցանիշները մնացել են կայուն: Վարկերն ավելացել են մեկ տոկոսով (նախորդ ամսվա համեմատ), իսկ ավանդները նվազել են մեկ տոկոսով՝ երկուսն էլ ճշգրտվել փոխարժեքով: Ավանդների նվազումը պայմանավորված է եղել ռեզիդենտ տնային տնտեսությունների անժամկետ ավանդների ցածր մակարդակով: Չաշխատող վարկերի մասնաբաժինն ընդհանուր համախառն վարկերի կազմում մնացել է կայուն՝ 2.8 տոկոս 2023 թ. հունվարին: Կապիտալի համարժեքության գործակիցն աննշան նվազել է՝ հասնելով 19.9 տոկոսի, միաժամանակ պահպանելով պահանջվող նվազագույն 12 տոկոսից բավականին բարձր մակարդակ: Բանկային համակարգը պահպանել է իրացվելիությունը, մինչդեռ շահութաբերությունն ըստ ակտիվների նվազել է, 2022 թ. դեկտեմբերի 4.1 տոկոսից հասնելով 2023 թ. հունվարին 3.6 տոկոսի:

Գծապատկեր 1. Ծառայությունների ոլորտը շարունակում է լինել ամենաարագ աճող ոլորտը


(Տնտեսական ակտիվության ցուցանիշ, փոփոխությունը ՆՏՏՀ, %)



Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

Գծապատկեր 2. Դրամական փոխանցումների աճը (ՆՏՏՀ) հունվարին դանդաղել է, սակայն մնում է բարձր


(ԱՄՆ դոլար)



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ

Գծապատկեր 3. Ընդհանուր գնաճը հունվարին կայունացել է


(ՄԳՀ գնաճ, ՆՏՏՀ, փոփոխություն, %)



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ


Գծապատկեր 4. Փետրվարի կեսերից ՀՀ դրամն ամրապնդել է իր դիրքերը գրեթե բոլոր արժույթների նկատմամբ

(ինդեքս. 2020 թ. մարտի 2= 100)




Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ

Գծապատկեր 5. Միջազգային պահուստները փետրվարին նվազել են՝ արդեն երկրորդ ամիսն անընդմեջ



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ

Գծապատկեր 6. Հունվարին բյուջեի հավելուրդ գերազանցել է նախորդ տարիների ցուցանիշը



Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ